



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Երեքշաբթի, 27 Յունուարի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգ. Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Հայկական Ոսկրածուծի Հիմնադրամի ներկայացուցիչներուն, որոնք եկած էին, ամանորի եւ Ս. Ծննդեան բարեմաղթութիւններու կողքին՝ ներկայացնելու Հիմնադրամի ծրագիրներն ու աշխատանքին ընթացքը: Առաջնորդ Սրբազանին կողքին, հանդիպումին մասնակցեցաւ հոգեշնորհ Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Տոբթ. Ֆրիտա Ճորտընի գլխաւորած պատուիրակութիւնը Առաջնորդ Սրբազանին ներկայացուց յատկապէս Հայաստանի մէջ իր հաստատած կեդրոնին շինարարական աշխատանքին մանրամասնութիւնները, նկատի ունենալով, որ նոր կեդրոնին բարեփոխման աշխատանքը մօտեցած է իր լրումին ու անոր բացումը կը նախատեսուի յառաջիկայ Ապրիլին: Առաջնորդ Սրբազանը հաղորդ դարձաւ նաեւ Հիմնադրամին կարգ մը ծրագիրներուն, որոնց շարքին՝ տարեկան ձեռնարկը՝ Յուլիսին, ու հանգանակային քայլարշաւ մը՝ Հոկտեմբերին:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկայացուցիչները ու բարձր գնահատեց անոնց հայրենասուեր ու ժողովրդասուեր աշխատանքը: Ան անդրադարձաւ այն իրողութեան, որ Ազգ. Առաջնորդարանն ու անոր հովանիին տակ գործող եկեղեցիներն ու միաւորները զօրակից են Հիմնադրամի առաքելութեան ու ըստ կարելոյն, մասնակցութիւն կը բերեն անոր հանգանակային ու այլ աշխատանքներուն: Ան յաջողութիւն եւ կորով մաղթեց Հիմնադրամի ծառայողներուն, որոնք այս առաքելութեան լծուած են կամաւոր աշխատանքով:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը ներկայացուցիչներուն յանձեց Ազգ. Առաջնորդարանս խորհրդանշող յուշանուէրներ:

## PRELATE WELCOMES ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY REPRESENTATIVES

On the afternoon of Tuesday, January 27<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from the

Armenian Bone Marrow Donor Registry who had come to convey their New Year and Christmas well wishes to the Prelate. Very Rev. Fr. Barthev Gulumian also joined in the meeting.

President of the Registry Dr. Frieda Jordan briefed the Prelate on the upcoming projects of the organization, specifically the progress of the stem cell harvesting center in Armenia which is scheduled to open in April, as well as their annual banquet which will take place in July and the Walkathon in October.

The Prelate commended the representatives and the noble work they carry out through the Registry, and affirmed that the Prelacy and affiliated bodies continue to support the organization morally and financially.

The Prelate wished them success in all future endeavors and presented them with mementos.